Հետազոտական աշխատանք

Տիտղոսաթերթ

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	«Բառարանագրություն» թեմայի ուսուցման արդյունավետությունը փուլային ուսուցման եղանակով 10- րդ դասարանում:
Ուսուցչի տվյալներ • Ա.Ա.Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Գոհար Յուրիկի Աղեկյան Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի հայոց լեզու , հայ գրականություն 10-րդ, 11-րդ, 12-րդ
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Գևորգ Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոց 010540010 school182@schools.am 182imdproc.am

Բովանդակություն

1. Տիտղոսաթերթ 1
2.Բովանդակություն..... 2
3.Ներածություն..... 2
4.Պարագրաֆներ, մասեր.....
5.Գրականության ակնարկ..... 4
ա/ Գլուխ 1 4-10
բ/ Գլուխ 2 10-21
6.Օգտագործված մեթոդները..... 21
7.Իրականացման ժամանակահատվածը..... 21
8.Թիրախ խումբը..... 21
9.Եզրակացություններ, առաջարկություններ..... 22
10.Օգտագործված գրականության ցանկ..... 24
11.Հավելվածներ..... 24

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Որքանով է արդյունավետ փուլային ուսուցման եղանակի կիրառումը 10-րդ դասարանի «Բառարանագրություն» ուսուցման գործընթացում:
Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	Ինչպես հայտնի է, վերջին տարիներին հանրակրթական դպրոցում տեղի են ունեցել կառուցվածքային և արմատական փոփոխություններ, որն էլ պահանջում է ուսուցման ընթացքում կիրառել փուլային հաջորդականության սկզբունքը:Այն պահանջում է դպրոց ներմուծել ուսուցման նոր տեխնոլոգիաներ, մեթոդներ: Հետազոտական աշխատանքը վերաբերում է ավագ դպրոցում ներդրվող փուլային ուսուցման եղանակին: Փուլային ուսուցումը ժամանակակից մանկավարժական մտքի ձեռքբերումներից է և շատերին անծանոթ:Ուսուցումն առավել արդյունավետ և արդիական դարձնելու համար ավագ դպրոցի ուսուցիչը պետք է կարողանա նախագծել և

	դասապրոցեսին կազմակերպել այնպիսի ուսուցում, որի ընթացքում աշակերտը ոչ թե պատրաստի գիտելիքներ ստանա, այլ որոնի և ձեռք բերի, կարողանա մտածել և փնտրել: Հանրակրթության բարեփոխումների ընդհանուր ուղղվածությունը և տրամաբանությունը պայմանավորում են ուսումնական նոր ծրագրերի ու դասագրքերի, ուսուցման նոր համակարգերի, եղանակների ներդրման անհրաժեշտություն: Փորձը ցույց է տալիս, որ առարկայական ծրագրով սահմանված ընդհանուր ժամաքանակն առանձին դասաժամերի բաժանելու և ուսումնական ամբողջական թեմաները ըստ առանձին–առանձին դասերի պլանավորելու և այդպես ուսուցանելու ընդունված ձևը միշտ չէ, որ արդյունավետ է: Երբեմն այն չի ապահովում անհրաժեշտ որակ: Հաշվի առնելով նշվածները՝ կատարել եմ այս հետազոտական աշխատանքը և առաջարկում եմ ավագ դպրոցում ուսուցումը կազմակերպելիս հաճախ կիրառել փուլային եղանակը: Այն կզարգացնի երեխաների մոտ հաղորդակցական կարողություններ, կհանգեցնի ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեությունը նախանշող ծրագրի, ուսուցման մոդուլի և նշանակության:Կնպաստի նաև համակարգված հերթագայությամբ մտային գործողությունների կատարման: Աշակերտները, բացի դասագրքերից ստացած առարկայական փաստական գիտելիքներից, կտիրապետեն գաղափարների ու հասկացությունների, աշխատանքի մեթոդների, կարողությունների ու հմտությունների: Հայոց լեզվի ծրագրային նյութի նմուշի քննությամբ ներկայացնում եմ փուլային ուսուցման եղանակին անցնելու կարևորությունը, եղանակի նպատակները, խնդիրները, համառոտ նկարագիրը: Աշխատանքը կարող է օգնել ուսուցիչներին՝ փուլային ուսուցման եղանակը հասկանալու և գործնականում այն կիրառելու համար:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	1.Սովորել սովորելու կարողունակություն 2. Ինքնահանաչողական և սոցիալական հարաբերությունների կարողունակություն

Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	Առարկայի դասավանդման մեթոդիկա

Պարագրաֆներ/մասեր

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	ԳԼՈՒԽ 1-ԻՆ Փուլային ուսուցումը չորս փուլից բաղկացած համակարգ է . 1. Ուսուցման նախապատրաստություն 2. Ուսումնական թեմայի բացատրություն և մեկնաբանություն 3. Թեմայի հետազոտություն և յուրացում 4. Թեմայի յուրացման արդյունքի ներկայացում, գնահատում և ամփոփում Յուրաքանչյուր փուլ ունի կոնկրետ նպատակներ և խնդիրներ, բնորոշ առանձնահատկություններ: Ուսուցումը փուլային եղանակով կազմակերպելու համար ուսուցչին անհրաժեշտ է կազմել երկու պլան՝ թեմատիկ և ընթացիկ: Եթե թեմատիկ պլանով ծրագրվում և պլանավորվում է ուսուցման կազմակերպման վերջարդյունքը՝ ի՞նչ և ինչու՞ սովորել, ապա ընթացիկ պլանով ծրագրվում են թեմատիկ պլանով սահմանված նպատակների լուծմանն ուղղված աշխատանքները, այսինքն՝ ուսումնական խնդիրները: Ուսուցման այս եղանակի ժամանակ փոխվում է ուսուցման մեթոդաբանությունը, ուսուցման ամբողջական գործընթացը

պայմանականորեն բաժանվում է փուլերի և կազմակերպվում դասաշարերի տեսքով:

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ /ուսուցման նախապատրաստություն/

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝

- Սովորելու գործընթացի իմաստավորում
- Գիտելիքների պատկերացումների ուրվագծում
- Ուսումնառական հետաքրքրասիրության խթանում
- Գիտելիքը, կարողությունը և հմտությունը իբրև փոխկապակցված իրողություններ դիտելու և ճանաչելու , ուսուցման փուլային եղանակով դրանց իրականացումը ծրագրելու կարողության ու հմտության ձեռքբերում
- Ուսումնական գործընթացի նպատակների ու խնդիրների սահմանում

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

- Ծանոթանալ պետական և առարկայական չափորոշիչների բովանդակային պահանջներին
- Կատարել «փուլային ուսուցման եղանակ» հասկացության բարտեզագրում
- Մշակել փուլային եղանակով ուսուցման ընթացակարգեր

Այս փուլում բնության նյութ է դառնում ոչ թե ուսումնական բուն նյութը՝ գիտելիքը, այլ նրա ձեռքբերմանն ուղղված գործունեությունը: Ուսուցչի ուղղորդմամբ աշակերտները փորձում են մանկավարժական տեսանկյունից ընբռնել և հասկանալ, սահմանել սովորելու նպատակը, պլանավորել գործողությունները: Ուսուցչի ուշադրությունը պետք է ուղղված լինի առարկայական բովանդակության շրջանակներից դուրս գտնվող առաջադրանքների կատարմանը:Թվում է, թե այսպես գիտելիքը կարող է մղվել երկրորդ պլան, բայց այս կերպ հաղորդվողը նույնպես գիտելիք է: Ուսուցչի օգնությամբ ստեղծվում է «Ուսումնական ուղեցույցով» աշխատելու բայլաշարերի խումբ:Կիրառվում են տարբեր մեթոդներ ու հնարներ:

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ /թեմայի բացատրություն, մեկնաբանում/

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝

- Գիտելիքի ընդհանրական պատկերի ուրվագծում
- Հասկացությունների , գաղափարների հասկացման տիրույթի ընդլայնում և ամրապնդում
- Թեմայի և ենթաթեմաների միմյանց հետ ունեցած կապերի բացահայտում
- Գիտելիքը մշակելու և վերլուծելու կարողությունների զարգացում և ամրապնդում

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

- Ծանոթանալ դասագրքի նյութին, ինչպես նաև ուսուցչի մատուցած նյութին
- Առանձնացնել հիմնական հասկացությունները, դասակարգել, սովորել դրանց դասագրքային սահմանումները
- Վերարտադրողաբար ներկայացնել թեմայի բովանդակային պատկերը

Այս փուլում ճնշության նյութ է դառնում գիտելիքը:Ուսուցիչը բացատրում և մեկնաբանում է թեման: Այնուհետև աշակերտները անհատական ընթերցանությամբ ծանոթանում են դասագրքային շարադրանքին: Այս աշխատանքին հաջորդում է ուղղորդված ընթերցանությունը:Կատարվում է թեմայի քարտեզագրում: Սա հնարավորություն է տալիս ոչ միայն պատկերացնել, այլև հստակ և ամբողջական տեսնել թեման: Ստեղծվում է թեմայի սահմանման տեսողական պատկեր:

ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ /թեմայի հետազոտում և յուրացում/

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝

- Թեմայի իմացական շրջանակի ընդլայնում և ամրապնդում
- Թեման ինքնուրույնաբար հետազոտելու կարողությունների և հմտությունների ընդլայնում և ամրապնդում
- Համագործակցային և խմբային աշխատանքի կիրառական փորձառության ամրապնդում

- Փոխօգնության գիտակցում

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

- Ձևավորել աշխատանքային ենթախմբեր
- Կազմել անհատական, խմբային և համագործակցային աշխատանքների կատարման քայլաշարեր
- Խթանել սովորողների՝ գիտելիք կառուցելու հետաքրքրվածությունը
- Կարգավորել ենթախմբերում կատարվող աշխատանքների ընթացքը
- Կատարել լրացուցիչ ուսումնական նյութի նպատակահարմար ընտրություն

Այս փուլին բնորոշ է հետազոտելու, որոնելու միջոցով ձեռք բերվող գիտելիքը:Սա ուսումնառության բուն գործընթացն է, երբ ուսուցչի օգնությամբ պարզվում է ,թե ինչպես պետք է ընթանա թեմայի հետազոտումը: Ուսուցչի խնդիրն է բոլորի համար ստեղծել ազատ ու անկաշկանդ մտածելու և գրելու հնարավորություն, կարգավորել թեմայի յուրացման ընթացքը: Սովորողները «Ուսումնական ուղեցույցում» կատարում են գրառումներ, վերլուծություններ, փորձում են հասկանալ, թե ինչու և ինչպես են կատարելու տվյալ աշխատանքը:Այս փուլում սովորողները գիտելիքը ոչ թե ստանում, այլ կառուցում են, կրթությունը կազմակերպվում է ոչ թե հանուն գիտելիքի, այլ գիտելիքի միջոցով ձեռք բերվելու ճանապարհով: Աշակերտը հետևում է իր մտքի զարգացման ընթացքին, մասնակցում է խմբի աշխատանքներին, իրեն զգում է հանրության լիարժեք անդամ:

Դասարանը ըստ թեմայի ենթաթեմաների քանակի բաժանվում է ենթախմբերի:Յուրաքանչյուր ենթախմբի հանձնարարվում է մեկ ենթաթեմայի ուսումնասիրություն: Ենթախմբի տարբեր անդամներ կատարում են տարբեր աշխատանքներ, հետո կատարվում է փոխուսուցում : Սրան էլ հաջորդում է ենթախմբային քննարկումը:

ՉՈՐՐՈՐԴ ՓՈՒԼ /արդյունքի ներկայացում, գնահատում և ամփոփում/

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝

- Յուրացման մակարդակի որոշում և գնահատում
- Թեման իմաստալից ամբողջությամբ ներկայացնելու կարողություններին ու հմտություններին ամրապնդում
- Յուրացման արդյունքը ցուցապաստառների, ռեֆերատների, զեկուցումների, շնորհանդեսների միջոցով ներկայացնելու կարողությունների ու հմտությունների ամրապնդում

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

- Ներկայացնել գիտելիքների ստուգման հստակ կարգ և չափորոշիչներ
- Ստուգել յուրացման արդյունքը
- Կատարել անդրադարձ

Փուլի սկզբում ներկայացվում են ստուգման կարգը, չափորոշիչները: Աշակերտը պետք է իմանա, թե գնահատվելու համար իրենից ինչ է պահանջվում: Քանի որ փուլի նպատակը թեմայի յուրացման վերջնարդյունքի գնահատումն է, ուստի գնահատման եղանակը միավորային է, իսկ նախորդ փուլերում կիրառվում է ուսուցանող գնահատումը: Ստուգման ձևերը տարբեր են: Ընտրված թեմայի համար ստուգման նախընտրելի ձևը ռեֆերատը , զեկուցումը, շնորհանդեսը կամ գծակարգն է: Վերջում սովորողները կատարում են անդրադարձ, որը կարելի է կատարել տարբեր ձևերով:[1]

ԳԼՈՒԽ 2-ՐԴ

Փուլային ուսուցման եղանակով իմ անցկացրած դասի նմուշ-օրինակ

Հետազոտվող նյութը 10-րդ հումանիտար հոսքային դասարանի հայոց լեզվի ծրագրային «Բառարանագրություն» թեման է, որի մեջ մտնում են «Բառարանների տեսակները», « Հայերենի նշանավոր բառարանները», « Բառարանների կառուցվածքն ու օգտվելու կանոնները» ենթաթեմաները: Այս նյութը տարիներ շարունակ դասավանդելիս բախվել եմ հետևյալ խնդիրներին՝ նյութը ծավալուն է և անհետաքրքիր

աշակերտների համար: Որոշեցի այս տարի կիրառել Փուլային ուսուցումը:

---

[1] Ս. Սարուխանյան, Մ. Միրումյան, Ն. Դիլաղաջյան, Փուլային ուսուցման եղանակ, Երևան, 2014թ.:

Փուլ առաջին

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝

- Ավագ դպրոցում ուսումնառության հիմնական նպատակի գիտակցման ընկալում, անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերման անհրաժեշտ գիտակցում:
- Ավագ դպրոցում «Բառաբանագրություն» ուսումնական թեմայի նպատակների, խնդիրների պարզաբանում, սովորողի աշխարհայացքի ընդլայնում:
- «Ուսումնական ուղեցույցով» աշխատելու և ինքնուսուցման պլանավորում, ունեցած գիտելիքի զարգացում:
- «Փուլային ուսուցման եղանակով» ուսումնական պարապմունքների անցկացման ընթացակարգի ուրվագծում:

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

- «Պրիզմա» վարժությամբ խթանել «Բառաբան» հասկացության և նրա բաղադրիչների մասին սովորողների պատկերացումները: Կատարել «Բառաբան», «Նպատակ», «Խնդիր» եզրաբառերի մեկնաբանում:
- Մշակել «Ուսումնական ուղեցույցով » աշխատելու ֆայլաշարերը:
- Ընբռնել «Փուլային ուսուցման եղանակի» տարբեր փուլերի միջև եղած բովանդակամասնային կապերը:

Քննության նյութ եմ դարձնում գիտելիքի ձեռքբերմանն ուղղված գործունեությունը: Սովորողների համար պարզում եմ ու սահմանում իրենց նպատակները ու խնդիրները և ներգրավում եմ գիտակցված և իմաստավորված գործունեության մեջ:

Փուլն սկսվում եմ իմ հաղորդմամբ: Հանձնարարում եմ կատարել «Պրիզմա» վարժությունը՝ «Բառարան» գլխաբառով /անհատապես կամ զույգերով/:



Ներկայացված արդյունքները քննարկվեցին դասարանի կողմից , մեկնաբանվեցին եզրույթները: Ցուցահանչյուրը տետրում ամբողջացրեց իր պատկերացումները:Այնուհետև ներկայացրի թեմային առնչվող չափորոշչային պահանջները, «Ուսումնական ուղեցույցի» էությունը: Սովորողների ուշադրությունը հրավիրեցի այն հանգամանքին, որ սովորողը ոչ միայն գիտելիք է ձեռք բերում, այլև փնտրում է մտածական գործունեության հնարներ, հմտանում դրանք ձեռք բերելու եղանակների ու ձևերի մեջ, որով էլ զարգանում է նրա մեթոդական մտածողությունը:Սովորողը հնարավորություն է ստանում տնօրինելու իր կարողությունները, վերահսկելու ուսումնառության գործընթացը: Այս ամենից հետո աշակերտներին ներկայացրի փուլային ուսուցման եղանակը: Աշակերտները բարտեզագրեցին «փուլային եղանակ» հասկացությունը, ստեղծվեց տեսողական պատկեր:

Փուլ երկրորդ

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝

- Ուսումնական գործընթացի պլանավորում և կազմակերպում:
- Բառարան, հանրագիտական, բացատրական, ստուգաբանական, տերմինաբանական, թարգմանական, դարձվածաբանական և այլ հասկացությունների հասկացում, ամրակայում:
- «Բառարանագրություն» ծրագրային բաժնի ուսումնառական նպատակների և խնդիրների ընդհանրական պատկերի ուրվագծում:
- Բառարանների ստեղծման, դրանց անհրաժեշտության, գործնական կիրառման մասին պատկերացումների ձևակերպում:
- Մայրենի լեզվի անծանոթ բառերի ուսումնասիրում , հայերենի հարուստ բառապաշար ունենալու գիտակցում:

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

- Ուսումնական մոտիվացիա ստեղծել տեսադասախոսության, բարտային առաջադրանքների, ԳՈՒՍ աղյուսակի միջոցով :
- «Շրջագայություն դասագրքի էջերով»,«Ուղղորդված ընթերցանություն» մեթոդներով մշակել և որոշակիացնել ծրագրային նյութի ուսումնասիրության բայլաշարը և մեթոդները:
- Առանձնացնել «լեզվագիտական, հանրագիտական» հասկացությունները:
- Կարողանալ տարբերել բառարանների տեսակները, օգտվել դրանցից:

Քննության նյութ դարձրի գիտելիքը: Ստեղծեցի ուսումնական մոտիվացիա. ցուցադրեցի տարբեր բառարանների նկարներ, նշանավոր հեղինակների, գործիչների դիմանկարներ, ովքեր ստեղծել, գրել են նշանավոր բառարաններ, չլրացված գծապատկերի տեսքով պաստառ: Բաժանեցի բարտեր, որոնց վրա տպագրված են տարբեր բառարաններից հատվածներ: Ներկայացված են նաև բառեր, որոնք պետք է բացատրել:

Աշակերտներն ուսումնական ուղեցույցում գրի առան մեթոդներն ու հնարները, որ կարող են կիրառվել նյութն ուսումնասիրելիս, աշխատանքի արդյունքի ներկայացման ձևերը՝ բանավոր կամ գրավոր հաղորդում, պաստառ, թերթ, շարադրանք, շնորհանդես, ռեֆերատ: Ներկայացրի համակարգված տեղեկություններ: Այնուհետև աշակերտները լրացրին ԳՈՒՍ աղյուսակի 1-ին և 2- րդ սյունակները որից հետո ծանոթացան դասագրքում զետեղված նյութին: Ուրվագծվեց գիտելիքի ընդհանրական պատկերը: Նյութը բաժանեցի ուսումնասիրության համար առավել հարմար ենթաթեմաների:

1-ին ենթաթեմա	«Հանրագիտական բառարաններ» «Բառարաններից օգտվելու կանոնները»
2-րդ ենթաթեմա	«Բացատրական բառարաններ» «Ստուգաբանական բառարաններ»
3-րդ ենթաթեմա	«Բարբառային բառարաններ» «Հոմանիշների բառարաններ»
4-րդ ենթաթեմա	«Արևելահայ-արևմտահայ բառարաններ» «Ուղղագրական –ուղղախոսական բառարաններ»

Ներկայացրի նաև օժանդակ գրականության ցանկ, վեբ- որոնման հասցեներ: Այս փուլում աշակերտներն ավելի հստակեցրին քայլաշարը, օգտվեցին նախորդ փուլում ձեռք բերած գիտելիքներից:

ՓՈՒԼ ԵՐՐՈՐԴ

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝

- «Բառարանագրություն» ծրագրային բաժնի դասագրքային և լրացուցիչ ուսումնական նյութերով աշխատելու, այն

	ինքնուրույնաբար և ստեղծագործաբար հետազոտելու ուսումնական որակների զարգացում և ամրապնդում: ● Գիտահետազոտական պարզ աշխատանքի կատարման փորձառության ձեռքբերում: ● Բառապաշարի հարստացում, ինքնուրույն խոսք կառուցելու հմտության խորացում: ● Արդյունավետ շփվելու, համագործակցելով հետազոտական աշխատանք կատարելու հմտությունների ամրապնդում և ընդլայնում: ● Ինքնուսուցման, ինքնակազմակերպման անհատական որակների ձեռքբերում: ● Զարգացնել տարբեր տեխնիկական միջոցներից օգտվելու հմտությունների զարգացում և ամրապնդում ԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ● Ձևավորել աշխատանքային չորս խումբ՝ ● «Վեբ-որոնում», «ՓԳՀ» «Կրկնակի գրառումների օրագիր», « ԳՈՒՍ» ,«Խաթարված հերթականություն» մեթոդների և վարժությունների միջոցով կազմակերպել ծրագրային նյութի ուսումնասիրությունն ու յուրացումը: ● Յուրացնել նոր տեղեկությունները, դրանք վերածել գիտելիքի: ● Զարգացնել տարբեր տեխնիկական միջոցներից օգտվելու հմտությունը Այս փուլում աշակերտը պետք է հետազոտի, որոնի ուսումնասիրի և այս ամենի շնորհիվ ձեռք բերի կառուցվող գիտելիքը: Սա ուսումնառության բուն գործընթացն է: Դասարանը ,ըստ թեմատիկ բաժնի ենթաթեմաների քանակի, բաժանել եմ ենթախմբերի: Ձևավորվել եմ չորս խումբ, որոնք անվանադրվել են՝

1.«Հանրագիտական բառարաններ , բառարաններից օգտվելու կանոնները»

2.« Բացատրական և ստուգաբանական բառարաններ»

3. «Բարբառային և հոմանիշների բառարաններ»

4. «Արևելահայ-արևմտահայ և ուղղագրական –ուղղախոսական բառարաններ»

Բաշխեցի խմբի անդամների գործառույթները: Սկսվեց ուսումնական նյութ ձեռք բերելու գործընթացը, որի համար աշակերտները օգտվեցին տարբեր աղբյուրներից: Նրանք կարող էին օգտվել և՛ դասագրքից, և՛ իմ հանձնարարած օժանդակ գրականությունից: Հայտնվելով բազմաբնույթ ու մեծաքանակ տեղեկատվական նյութի տիրույթում՝ աշակերտները սկսեցին կատարել նպատակային ընտրություն: Նրանց մոտ զարգացավ կարևորը, անհրաժեշտը նկատելու, առանձնացնելու մտավոր կարողությունը:

«Ուսումնական ուղեցույցում» աշակերտները գրառեցին հետագա քայլաշարը: Սկսվեց մեթոդների ,վարժությունների ընտրությունն ու բաշխումը:

«Հանրագիտական բառարաններ , բառարաններից օգտվելու կանոնները» խմբին հանձնարարեցի օգտագործել ԳՈՒՍ- ը: Ուսումնասիրության ընթացքում սա դարձավ աշակերների ուղեցույցը: ԳՈՒՍ–ի միջոցով աշակերտներն ուսումնառության վերջում համեմատեցին թեմայի վերաբերյալ իրենց նախնական գիտելիքները ձեռք բերածի , ստացածի հետ:

Հանրագիտական բառարաններ , բառարաններից օգտվելու կանոնները		
Գիտեմ	Ուզում եմ իմանալ	Սովորեցի

« Բացատրական և ստուգաբանական բառարաններ» խումբը կատարեց «Վեբ- որոնում» վարժությունը: Սա մի գործունեություն է , որի ընթացքում գիտելիքները հիմնականում ստացվում են համացանցի աղբյուրներից՝ կայքեր, հանրագիտարաններ, ֆորումներ և այլն:

«Բարբառային և հոմանիշների բառարաններ» խմբին հանձնարարեցի աշխատել «Կրկնակի գրառումների» մեթոդով: Սա հնարավորություն տվեց առնչություններ ստեղծել նախկինում լսած բարբառային բառերի , հոմանշային զույգերի և ուսումնասիրության արդյունքում սովորածի միջև, այսինքն՝ իմացածի և ձեռք բերածի միջև:

«Արևելահայ-արևմտահայ և ուղղագրական -ուղղախոսական բառարաններ»

խմբին հանձնարարեցի նյութն ուսումնասիրել «Փոխգործուն գրառումների համակարգ» մեթոդի կիրառմամբ:

Գիտեմ	Զգիտեմ	Հակասում է իմացածին	Անհասկանալի է	Հետաքրքիր է

Սա նպաստեց ակտիվ, ինքնուրույն ուսուցմանը, և ավելի արդյունավետ եղավ, երբ յուրաքանչյուր սովորող իր համար կազմեց աղյուսակ և կատարեց դասակարգում:Այնուհետև զույգերով, վերջում էլ խմբով կկազմակերպեցին մտքերի փոխանակություն:

Յուրաքանչյուր ենթախմբում ուսումնասիրվեց ծրագրային ենթաթեման, խմբի յուրաքանչյուր անդամ կատարեց տարատեսակ վարժություններ, գաղափարի քարտեզագրում, արեց գրառումներ

«Ուսումնական ուղեցույցում», կատարեց դասագրքի վարժությունները: Այս ամենն անելով՝ նա ինքնուրույնաբար ձեռք բերեց գիտելիքներ: Վերջում յուրաքանչյուր ենթախումբ կազմեց ու ներկայացրեց համատեղ ուսումնասիրած ու մշակած նյութի համառոտ շարադրանքը: Դա արվեց ռեֆերատի, բանավոր կամ գրավոր խոսքի ձևով:

Բոլոր աշխատանքներն ավարտելուց հետո անդրադարձ կատարեցինք երկրորդ փուլին, լրացնեցինք Գ ՈՒՍ- ի երրորդ սյունակը: Այսպես բոլոր ենթախմբերը պարզ տեսան, թե ինչ են սովորել:

ՓՈՒԼ ՉՈՐՐՈՐԴ

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝

- Սովորածի ամրապնդում, ձեռք բերած գիտելիքի խորացում:
- Ցուցադրման արդյունքը ցուցապաստառով, ռեֆերատով, շնորհանդեսով, գրավոր կամ բանավոր զեկուցմամբ ներկայացնելու հմտության ամրապնդում:
- Գիտելիքի յուրացման մակարդակի ստուգում և գնահատում:
- «Բառարանագրություն» ծրագրային նյութի ներկայացում:

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

- Ընտրել միավորային գնահատման սանդղակները:
- Կատարել միավորային գնահատում՝ մեկնաբանելով այն:
- Վերհիշել և ճնշել՝ ինչ սովորեցին, ինչպես և ինչու, արժևորել նյութի ուսումնառության վերջնարդյունքում ձեռք բերած գիտելիքը:

Չորրորդ փուլի սկզբում պարզաբանեցին և ներկայացրինք յուրացման արդյունքի ստուգման, գնահատման նպատակները ու խնդիրները: Սահմանեցինք ստուգման կարգն ու չափորոշիչները, քանի որ

աշակերտները պիտի իմանան , թե գնահատվելու համար իրենցից ինչ է պահանջվում:

Ձևավորեցի նոր ենթախմբեր, որոնցում ներգրավեցի մեկական սովորող նախորդ չորս ենթախմբերից: Նոր ենթախմբերից յուրաքանչյուրին ելույթի համար տրվեց 5-7 րոպե: Ես առանց միջամտելու գնահատեցի սովորողներին նախօրոք մշակած գնահատման թերթիկով: Կատարեցի վերջնական գնահատում, գնահատականը հայտարարեցի և մեկնաբանեցի:

Վերջում կատարեցի անդրադարձ: Սովորողները մտովի հետ են գնացին թեմայի յուրացման և հետազոտման ճանապարհով: Անդրադարձը արել եմ 2 եռասյունակ աղյուսակների միջոցով՝կիրառելով որակական հարցման մեթոդը:

Ի՞նչ արեցիք	Ինչպե՞ս	Ինչու՞
Ի՞նչ տվեց այս աշխատանքը ինձ	Ի՞նչ փոխեց իմ կյանքում	Այս մեթոդով այլ թեմաներ ևս կցանկանա՞ս սովորել

Դիտարկումը ցույց տվեց, որ աշակերտները մեծ ոգևորությամբ են աշխատել, լավ յուրացրել են թեման, կարողացել են ինքնուրույն աշխատել, պրպտել, գտնել իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը: Հետաքրքրական է, որ բոլորը ցանկություն հայտնեցին շատ թեմաներ ուսումնասիրել այս մեթոդով:

Օգտագործված մեթոդները, գործիքները	Բանակական հարցում՝ եռաստիճան աղյուսակ– հարցաթերթիկների միջոցով:
Իրականացման ժամանակահատվածը	12.09.2022 – 15.09.2022
Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	10–րդ դասարան, հումանիտար հոսք, 22 աշակերտ՝ 8 տղա, 14 աղջիկ

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ Հետազոտական աշխատանքը վերաբերում էր ավագ դպրոցում ներդրվող փուլային ուսուցման եղանակին: Կատարելով այս հետազոտական աշխատանքը՝ առաջարկում եմ ավագ դպրոցում ուսուցումը կազմակերպելիս հաճախ կիրառել փուլային եղանակը: Այն կզարգացնի երեխաների մոտ հաղորդակցական կարողություններ, կհանգեցնի ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեությունը նախանշող ծրագրի, ուսուցման մոդուլի և նշանակության:Կնպաստի նաև համակարգված հերթագայությամբ մտային գործողությունների կատարմանը: Աշակերտները, բացի դասագրքերից ստացած առարկայական փաստական գիտելիքներից, կտիրապետեն գաղափարների ու հասկացությունների, աշխատանքի մեթոդների, կարողությունների ու հմտությունների:

	Ուսումնասիրելով փուլային ուսուցման եղանակը և այս եղանակով դասի նմուշ- օրինակը՝ գալիս ենք այն եզրակացության , որ փուլային եղանակով ուսուցման դեպքում ուսուցման միավորը ոչ թե դասն է , այլ ըստ համակարգված դասաշարերի համախումբը, երբ ծրագրի յուրաքանչյուր թեմատիկ բաժին ուսումնասիրվում և յուրացվում է ոչ թե ըստ ենթաթեմաների,այլ ըստ փուլերի՝ յուրաքանչյուր փուլի հատկացվող որոշակի քանակի դասաժամերի տեսքով: Առաջարկում եմ ավագ դպրոցում ուսուցումը կազմակերպելիս հանախ կիրառել փուլային եղանակը: Այն կզարգացնի երեխաների մոտ հաղորդակցական կարողություններ, կհանգեցնի ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեությանը: Աշակերտները, բացի դասագրքերից ստացած առարկայական փաստական գիտելիքներից, կտիրապետեն գաղափարների ու հասկացությունների, աշխատանքի մեթոդների, կարողությունների ու հմտությունների: Հայոց լեզվի «Բառարանագրություն» ծրագրային նյութի քննությամբ ներկայացրել եմ փուլային ուսուցման եղանակին անցնելու կարևորությունը, եղանակի նպատակները, խնդիրները, համառոտ նկարագիրը: «Բառարանագրություն» թեման ավելի հետաքրքիր դարձնելու, աշակերտների հետաքրքրասիրությունը շարժելու, հետազոտական կարողությունները զարգացնելու նպատակով առաջարկում եմ կիրառել նշված եղանակը: Տարիներ շարունակ ես ինքս ուսուցանել եմ այս թեման, և նկատել եմ , որ աշակերտներին այն չի հետաքրքրում, քանզի նյութը երկար է ու ձանձրալի, իսկ այս մեթոդը կիրառելիս երեխաներն աշխատում էին մեծ ոգևորությամբ ու խանդավառությամբ:

Օգտագործված գրականության ցանկ

Օգտագործված գրականության ցանկ

1. Եգեկյան Լ., Սարգսյան Ա., Սաֆապետոյան Ռ., Հայոց լեզու, Դասագիրք ավագ դպրոց հումանիտար հոսքի 10-րդ դասարանի համար. 2009թ.:
2. Ս. Սարուխանյան, Մ. Միրումյան, Ն. Դիշաղաջյան, Փուլային ուսուցման եղանակ, Երևան, 2014թ.:
3. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ,2008թ.:

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր

- Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)
- Նկարներ
- Արդյունքներ

Հավելված 1

Ի՞նչ արեցինք	Ինչպե՞ս	Ինչու՞

Հավելված 1

Ի՞նչ տվեց այս աշխատանքը ինձ	Ի՞նչ փոխեց իմ կյանքում	Այս մեթոդով այլ թեմաներ ևս կցանկանա՞ս սովորել